ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ 4-61-92
Fax 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2025թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր՝ 14.01.2025թ.թիվ՝ ԴԽ/14.2/882-2025 հանձնարարականի.

Հարգելի՛ պարոն Խուդաթյան,

Հայտնում եմ Ձեզ, որ քաղաքացի Մանուշակ Հակոբյանի դիմումը շրջաբերական գրությամբ ուղարկվել է Լոռու մարզի Ալավերդի համայնքին:

Ձեզ է ներկայացվում վերոնշյալ դիմումի պատասխանը:

Առդիր 1 (մեկ) նիշք:

X _____

Հարգանքով՝ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

կատ.՝ Զարգացման ծրագրերի,
մշակման և իրականացման բաժին
հեռ. /0322/ 2-53-25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
Էլ. փոստ՝ alaverdimunicipality@gmail.com

N ԱՀ-0165/25
16 հունվար 2025թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ՄԱՐԶՊԵՏ ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղազարյան,

Ի պատասխան Ձեր 14.01.2025թ N 01/112,5/00348 գրության, հայտնում եմ, որ Ալավերդի համայնքի հնգամյա զարգացման ծրագրում նշվում են համայնքի զարգացման հիմնական ուղղությունները և այն ծրագրերը, որոնք պետք է իրականացվեն հնգամյա ժամանակահատվածում: Համայնքի զարգացման ծրագիրը հրապարակվել է Ալավերդի համայնքի պաշտոնական կայքում (alaverdi.am): Ակներ բնակավայրում առանձնացվել են մի շարք առաջնային լուծում պահանջող խնդիրներ.

- ճանապարհների անբարեկարգ վիճակ,
- լուսավորված կամ ոչ արդի լուսավորության համակարգով լուսավորվող փողոցներ,
- բնակավայրը գազաֆիկացված չէ,
- մշակույթի տան (ակումբի) շենքի անբարեկարգ վիճակ:

Թեև խնդիրները չեն սահմանափակվում նշվածներով, սակայն ներկայացված խնդիրները դիտարկվել են որպես առաջնային լուծման կարիք ունեցող, որի կարգավորման շուրջ տարվում են աշխատանքներ: Մասնավորապես՝ ՀՀ Կառավարության ֆինանսավորմամբ վերանորոգվում է Ակներ բնակավայր տանող միջբնակավայրային ճանապարհը, 2025 թվականին սուբվենցիոն ծրագրերի շրջանակում կապիտալ կվերանորոգվեն բնակավայրի 1-ին փողոցի 1-ին նրբանցքը և 5-րդ փողոցից 2-րդ փողոց տանող ճանապարհահատվածները, անց կկացվի լուսավորության նոր համակարգ, կվերանորգվի բնակավայրի ակումբի շենքը: Առաջիկա նոր ծրագրերը պլանավորելու ժամանակ համայնքապետարանը կկազմակերպի հանրային քննարկումներ, որտեղ համայնքի բնակիչները, այդ թվում՝ ակներեցիները կարող են ներկայացնել առաջարկներ և ծրագրեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

Կատ. Զարգացման ծրագրերի և ստորաբաժանման բաժնի պետ՝ Կ. Սիմոնյան